GE HEALTHCARE ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ BRIVO MR355 ՄԱԳՆԻՍԱՌԵԶՈՆԱՆՍԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ԳՀԾՁԲ-2020/21-ԵՊԲՀ»

ք.Երևան « » « » 2020թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամը ի դեմս ռեկտոր Արմեն Աբգարի Մուրադյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Ար.Մեդտեխնիկա» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Ն.Անդրեասյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է GE HEALTHCARE արտադրության BRIVO MR355 մագնիսառեզոնանսային համալիրի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների։

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով։

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը։ Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը։

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին։

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը։

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը։

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ։

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը։

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին։

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ։ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 9.429.000,00 (ինը միլիոն չորս հարյուր քսանինը հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

---

[21]Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող

է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Երևանի Մխիթար Հերացու անվան պետական	«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ
բժշկական համալսարան Հիմնադրամ	Հասցե՝ ք.Երևան, Հերացի 7
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 2	Հեռախոսահամար՝ 010 58 32 02
Հեռախոսահամար՝ 060 621 000	Բանկ՝ «Կոնվերս բանկ» ՓԲԸ
Բանկ՝ Հայբիզնեսբանկ ՓԲԸ	Հ/հ՝ 1930041595160100
Հ/հ՝ 11500166513800	ՀՎՀՀ՝ 02604367
ՀՎՀՀ՝ 01503448	Էլ. հասցեն՝armedtechnicallc@gmail.com
Ռեկտոր՝ Ա.Մուրադյան	Տնօրեն՝ Ն.Անդրեասյան
_____	_____
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.07.31 13:20:28 AMST

Digitally signed by ANDREASYAN NUNE 7705870533
Date: 2020.07.30 14:02:41 AMST

Հավելված N 1
« » « » 2020թ. կնքված
«ԳՀԾՁԲ-2020/21-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	50421100	BRIVO MR355 մագնիսառեզոնանսայի և տոմոգրաֆիկ համալիրի սպասարկման ծառայությունները պետք է իրականացվեն համաձայն արտադրողի կողմից մշակված ժամանակացույցի և նորմերի: Ծառայությունները պետք է իրականացվեն արտադրողի մասնագետի, կամ արտադրողի համաձայնությամբ այլ ինժեների կողմից: Տեխնիկական սպասարկման ընթացքում անհրաժեշտ գործիքները և ընթացիկ ծախսանյութերը՝ մատուցողի միջոցներով: Ծառայությունները իր մեջ ներառում են նաև համալիրի կարևոր ցուցնիշների հեռահար ուսումնասիրություն և վերլուծություն, առաջացած խնդիրների մասին վերջնական օգտագործողին տեղեկացում: Տեխնիկական սպասարկման ընթացքում պարտադիր գործողությունները ներկայացված են հավելվածում:	հատ	9.429.000,00	5	ք. Երևան Աբովյան 60	

** Ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*
*** Ծառայության մատուցումն իրականացվելու է 2020 թվականին համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև դեկտեմբեր ամիսը ներառյալ՝ պահպանելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ը) պարբերության դրույթները:*

Հավելված

Աշխատանքի նկարագրություն	Նպատակ	Հաճախականություն	Պահանջվող հատուկ գործիք
Ընդհանուր			
Հեղուկ հելիումի մակարդակի գրանցում	անվտանգություն	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **ամեն օր**	-
Մագնիսի հեղուկ հելիումի ճնշման ցուցանիշի գրանցում	անվտանգություն	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **ամեն օր**	-
Հեղուկ հելիումի հովացնող կոմպրեսորի գազ հելիումի ճնշման գրանցում	անվտանգություն	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **ամեն օր**	-
Արտագին հովացման համակարգի ելքային ջրի ջերմաստիճանի գրանցում	անվտանգություն	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **ամեն օր**	-
Սենյակում թթվածնի տվիչի ցուցանիշի գրանցում	անվտանգություն	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **ամեն օր**	-
Մագնիսի սառեցնող գլխի, արտաքին պաշտպանիչի և կոնդենսատորի ջերմաստիճանների գրանցում	անվտանգություն	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **ամեն օր**	-
Հիմնական վահանակ			
Հավասարեցման լույսի ստուգում	պատկերի որակ	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **երկու անգամ**՝ համաձայն արտադրողի կողմից մշակված ժամանակացույցի	լազերային ուղղորդիչ
Ծրագրային փաթեթի արդիականացնում	պատկերի որակ	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **երկու անգամ**՝ համաձայն արտադրողի կողմից մշակված ժամանակացույցի	-
LVShim կարգաբերում	պատկերի որակ	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **երկու անգամ**՝ համաձայն արտադրողի կողմից մշակված ժամանակացույցի	ֆանտոմ

Coherent Noise առկայության ստուգում	պատկերի որակ	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **երկու անգամ**՝ համաձայն արտադրողի կողմից մշակված ժամանակացույցի	բազմաալիքայի ն օսցիլիգրաֆ-համալիր
Ազդանշան, աղմուկ հարաբերակցության ստուգում	պատկերի որակ	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **երկու անգամ**՝ համաձայն արտադրողի կողմից մշակված ժամանակացույցի	-
EPI սպիտակ պիկսելների առկայութան ստուգում	պատկերի որակ	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **երկու անգամ**՝ համաձայն արտադրողի կողմից մշակված ժամանակացույցի	-
Մագնիսի սենյակ			
Host- ICN համակարգրի թեսթավորում և փոշուց մաքրման աշխատանքներ	աշխ. վիճակ/մաքրում	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **մեկ անգամ**՝ համաձայն արտադրողի կողմից մշակված ժամանակացույցի	-
Էլեկտրական հոսանքի մոնիտորի ստուգում	աշխ. վիճակ	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **մեկ անգամ**՝ համաձայն արտադրողի կողմից մշակված ժամանակացույցի	ռադիոալիքներ ի չափիչ համալիր
Օդափոխիչների և ջրագծերի ստուգում	աշխ. վիճակ	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **երկու անգամ**՝ համաձայն արտադրողի կողմից մշակված ժամանակացույցի	օդի և ջրի չափագրիչ
Ռադիոալիքների ղեկավարող մոդուլի ստուգում	աշխ. վիճակ	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **երկու անգամ**՝ համաձայն արտադրողի կողմից մշակված ժամանակացույցի	թվային վոլտմետր
Սենյակում թթվածնի տվիչի կարգաբերում	անվտանգություն	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **մեկ անգամ**՝ համաձայն արտադրողի կողմից մշակված ժամանակացույցի	չափագրող համալիր

Cabinet Monitor - ի ցուցանիշների ստուգում	անվտանգություն	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **մեկ անգամ**՝ համաձայն արտադրողի կողմից մշակված ժամանակացույցի	-
ASC-Lite մոդուլի ցածր հաստատուն լարումների ստուգաչափում	աշխ. վիճակ	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **մեկ անգամ**՝ համաձայն արտադրողի կողմից մշակված ժամանակացույցի	թվային վոլտմետր
PHPS լույսերի ղեկավարող մոդուլի լարումների ստուգաչափում	աշխ. վիճակ	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **մեկ անգամ**՝ համաձայն արտադրողի կողմից մշակված ժամանակացույցի	թվային վոլտմետր
Հիմնական վահանակի և գրադիենտային փաթույթի հովացուցիչների խտանյութի մակարդակի ստուգում	աշխ. վիճակ	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **երկու անգամ**՝ համաձայն արտադրողի կողմից մշակված ժամանակացույցի	-
Հիմնական վահանակի և գրադիենտային փաթույթի հովացուցիչների խտանյութի պիտանելիության ստուգում	աշխ. վիճակ	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **մեկ անգամ**՝ համաձայն արտադրողի կողմից մշակված ժամանակացույցի	ստուգաչափիչ նյութ
BRM հովացուցիչ և MCS ջերմափոխանակիչ			
Պացիենտի օդի մղիչի ֆիլտրի մաքրում	անվտանգություն	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **երկու անգամ**՝ համաձայն արտադրողի կողմից մշակված ժամանակացույցի	-
Ռադիոալիքների ընդունիչ կոճղակների թեսթավորում, շոկ տվիչների ստուգում	անվտ-ն/պատկերի որակ	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **երկու անգամ**՝ համաձայն արտադրողի կողմից մշակված ժամանակացույցի	-
Պացիենտի պնեվմատիկ ազդանշանային համակարգի ստուգում	անվտանգություն	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **երկու անգամ**՝ համաձայն արտադրողի կողմից մշակված ժամանակացույցի	-

Մագնիսի գերսառը տիրույթի և հարակից հանգույցների ընդհանուր զննում	անվտանգություն	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **մեկ անգամ**՝ համաձայն արտադրողի կողմից մշակված ժամանակացույցի	հատուկ հագուստ և գործիքներ
PDU էլեկտրակառավարման հիմնական հանգույց			
Խտանյութի մղիչի ստուգում, քսանյութերի թարմացում	աշխ.վիճակ/մաքրում	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **մեկ անգամ**՝ համաձայն արտադրողի կողմից մշակված ժամանակացույցի	հեղուկ քսանյութ
Lytron մղիչի փոխարինում	անվտանգություն	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **մեկ անգամ**՝ համաձայն արտադրողի կողմից մշակված ժամանակացույցի	-
BRM հովացուցիչի պղնձե ջերմացրիչ	մաքրում	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **մեկ անգամ**՝ համաձայն արտադրողի կողմից մշակված ժամանակացույցի	-
MCS ջերմափոխանակիչի պղնձե ջերմացրիչ	մաքրում	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **մեկ անգամ**՝ համաձայն արտադրողի կողմից մշակված ժամանակացույցի	-
Համակարգիչ			
Վթարային անջատիչների, մարտկոցի և լույսային ազդանշանների ստուգում	անվտանգություն	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **երկու անգամ**՝ համաձայն արտադրողի կողմից մշակված ժամանակացույցի	-
Պացիենտի հետազոտությունների սեղան			
Տեխնիկական և ծրագրային թեսթավորում	աշխ. վիճակ	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **մեկ անգամ**՝ համաձայն արտադրողի կողմից մշակված ժամանակացույցի	-

Փոշուց ազատում ժամացույցի ուղղում	մաքրում/ աշխ. վիճակ	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **երկու անգամ**՝ համաձայն արտադրողի կողմից մշակված ժամանակացույցի	-
Սեղանի հորիզոնական շարժման հանգույցների ստուգում, կարգաբերում	անվտանգություն	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **երկու անգամ**՝ համաձայն արտադրողի կողմից մշակված ժամանակացույցի	-
Սեղանի ուղղահայաց շարժման հանգույցների ստուգում, կարգաբերում /ամբարկիչը ներառյալ/	անվտանգություն	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **երկու անգամ**՝ համաձայն արտադրողի կողմից մշակված ժամանակացույցի	-
Սեղանի շարժական մակերեսի վթարային դուրս բերման համակարգի ստուգում	անվտանգություն	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **երկու անգամ**՝ համաձայն արտադրողի կողմից մշակված ժամանակացույցի	-
Պացիենտի դիրքի և տեղակայման և ելման կետի տվիչների ստուգում	անվտ-ն/պատկերի որակ	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **երկու անգամ**՝ համաձայն արտադրողի կողմից մշակված ժամանակացույցի	-
Սեղանի շարժական մակերեսի կրիչի ստուգում, կարգաբերում	անվտ-ն/պատկերի որակ	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը **երկու անգամ**՝ համաձայն արտադրողի կողմից մշակված ժամանակացույցի	-

ԳՆՈՐԴ
Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 2
Հեռախոսահամար՝ 060 621 000
Բանկ՝ Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/հ՝ 11500166513800
ՀՎՀՀ՝ 01503448
Ռեկտոր՝ Ա.Մուրադյան

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.07.31 13:21:01 AMST

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Հերացի 7
Հեռախոսահամար՝ 010 58 32 02
Բանկ՝ «Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/հ՝ 1930041595160100
ՀՎՀՀ՝ 02604367
Էլ. հասցեն՝ armedtechnicallc@gmail.com
Տնօրեն՝ Ն.Անդրեասյան

/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by ANDREASYAN NUNE 7705870533
Date: 2020.07.30 14:03:23 AMST

Հավելված N 2
« » « » 2020թ. կնքված
«ԳՀԾՁԲ-2020/21-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ
դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
			... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամսական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** Պայմանագրում գումարները նշվում են տոկոսով, իսկ համաձայնագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.07.31 13:21:18 AMST

ԿԱՏԱՐՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by ANDREASYAN NUNE 7705870533
Date: 2020.07.30 14:04:27 AMST

Հավելված N 3
« » « » 2020թ. կնքված
«ԳՀԾՁԲ-2020/21-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
« » « » 2020թ. կնքված
«ԳՀԾՁԲ-2020/21-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն